

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Մօսկ», № 96. — Վերջին ամսում մեռած երկու նշանավոր հայ դործիչների՝ Տիգրան փաշա Ապրօի և և «Մասիս»-ի պատասխանատու խմբագիր արտօնատեր Կարապետ Իւթիւնեանի յիշատակներին նուիրուած յօդուածները իմանում ենք հետեւեալը.

Տիգրան փաշա Ապրօ որ այս օրերըս Զուլեյքերիւ փախճանեցաւ, կը մնար իբր վերջին բեկորներէն մէկը մեր «անհետացող տիպարներ»-ուն: Այդ տիպարն է՝ իսլամ պետութեան մէջ քաղաքական բարձր գերքի տիրացող հայր: Տիգրան փաշա Եգիպտոսի արտաքին գործերու նախկին նախարարն էր: Եգիպտոսի մը, և իր ամեն երկրացիներուն պէս աչքը բաց ճարպիկ մը, և մտքովն ալ՝ հայրու և օտարազգիի խառնածին մը. փեսայացած էր նուպար փաշային — սրբիշ իգմբեցիի մը: Տիգրան փաշա թէ՛ն բաւական զարգացած մարդ ու քանի մը լեզուներու հմուտ, սակայն մեծ հռչակ մը չստացաւ: Հանգամանքները իրեն չթոյլարեցին զոնէ մասամբ վայելել աներին համբաւը. Եգիպտոսի վրայ անդլիական տիրապետութիւնը հայոց առջև փակեց քաղաքական ասպարէզը: Տիգրան փաշային ազարանքը ամեն ձմեռ ասպնջարան էր Գահիրէ այցելող գերթէ բոլոր եւրոպացի ուշադրաւ անձնաւորութեանց: Հանգուցեալը Գահիրէի հայոց երեսփոխանական ժողովին նախագահի պաշտօնը կը վարէր — մշտական և անշարժ նախագահն էր յոյնիշատակ ժամանակաց անտիս:

Անհետացող տիպար մը և՛ Կարապետ Իւթիւնեանը, որ քանի մը

չարաթ առաջ Պօլիս մեռաւ, ութսունը անցուկ: Հին տիպար խմբագիրը «Մասիս» հիմնեց 1852-ին և անոր արտօնատէր-խմբագիրը մնաց մինչև 1884. իսկ այդ թիւականէն յետոյ, երբ թերթը այլևայլ խմբագրութեանց միջոցաւ զանազան փոփոխութիւններու ենթարկուեցաւ, Իւթիւնեան միշտ կը մնար արտօնատէր-պատասխանատուն, այսինքն՝ թէ՛ կառավարութեան առջև ինքն էր պատասխանատուն թերթի մը զոր չէր խմբագրեր:

Հրատարակիչ-խմբագիրը զարգացած միտք մը չէր, բայց բաւական հմուտ էր հայերէնի. զորոյ մը չեղաւ, այլ՝ թարգմանիչ մը. բայց, հայացուցած բաղմաթիւ վէպերէն շատ քիչը զբաւկան ու զաղափարական նշանակութիւն մը ունեցած և ազգած են հանրութեան վրայ: Էն աչքի դարնող գործը՝ Էօթէն Սիւի «Թափառական հրէան» է: Սակայն Իւթիւնեան շատ ու շատ բառեր կերտած և հրատարակ նետած է, օրուան դէպքերուն համաձայն: Այդ բառերը այսօր ընթացիկ գործածութեան մէջ են իբր հանրային սեփականութիւն, ոչ ոք սակայն տնոնց հեղինակը կը յիշէ:

«Մասիսին» յիսուն երկու տարուան տէրը անյիշատակ կը մեռնի, վասն զի ստեղծող մը չեղաւ, և ոչ ալ զաղափարներու տարածող մը: Ո՛չ յառաջագիմութիւնը, ոչ յետադիմութիւնը անոր մէջ բարեկամ մը կամ հակառակորդ մը կը կորսնցնեն: Իւթիւնեան «խեցը զուկը» խմբագիրը եղաւ, այսինքն՝ հրատարակիչը, որ հոտառութեամբ կը զգար, թէ՛ որմն կողմը ծռելու է, ո՞վ է օրուան զօրաւոր մար-

զը կամ կուսակցութիւնը: Սրտաճմլիկ բան մը կայ մահուանը մէջ՝ զրաւան մարդուն, մարդուն, որուն անբերութեամբը հանրութեան հոգին պահ մը տրամութեամբ չի համակեր: Բնութեան էն տխուր տեսարաններէն մին է՝ մաքը մտնող արև մը, որ մէկուն սիրտը չի կոտորեր:

— Նոյն համարում տպած մի այլ յօդուածից իմանում ենք, որ Պոլսում «հայ զրաւան և մտաւոր աշխարհի սմբերանի ներկայացուցիչներ որոշել են սեպտեմբերի 10-ին մի նեղ շրջանի մէջ համեստ կերպով տօնել դոկտոր Ն. Տաղաւարեանի հասարակական, ազգային և զրաւան գործունէութեան ֆառաւառակը: Այդտ բերած են հետեւեալ կենսագրական տեղեկութիւնները.

«Բօկտօր Ն. Տաղաւարեան զաւառացի է, ծնված լինելով Սեբաստիայում 1862 թուին: Եօթամեայ հասակում ծնողների հետ նա տեղափոխուել է Կ. Պոլիս, ուր 1878 թ. նա աւարտեց նախնական ուսումը Դալաթիայի Լուսատուրչեան վարժարանում, որի վարիչն էր Ստեփան Փափազեան և ապա զնաց 1878-ին Ֆրանսիա՝ երկրագործութիւն սովորելու համար: Միզրում նա աշխատում է զաւառական ագարակներից մէկի մէջ իբրեւ լոկ բանուր՝ գործնական երկրագործութեան ընտելանալու համար, իսկ ապա տեսականը սովորելու համար նա մտնում է Մէրլինի երկրագործական վարժարանը, որտեղ նա աւարտում է ուսումը 1881-ին: Ձգտելով ստանալ բարձր երկրագործական ուսումն, նա, իբրեւ շրջանաւարտ Մէրլինի վարժարանի, մրցմամբ մտնում է Պարիզի ազգային-երկրագործական ինստիտուտը (*Institut National Agronomique*), որտեղից 1883-ին դուրս է գալիս ճարտարագէտ—երկրագործ (*Ingenieur agronome*) դիպլոմով:

Աերագաւանալով Կ. Պոլիս, երկտասարդ Տաղաւարեանը, թէև օժտված գիտութեամբ և մանաւանդ գործնական գիտութեամբ, առժամանակ ծա-

ռայում է երկրագործութեան միևնուտըութեան մէջ, մինչև որ 1884-ին հրաւիրւում է իւր հայրենիք Սեբաստիայի ազգային վարժարանների տեսուչ: Այդտեղ նա ունենում է բաւական լայն և եռանդուն գործունէութիւն. բարեկարգում է զարդոցները, հիմնում է «Հայուհեաց ընկերութիւն ի նպաստ իզական սեռի դաստիարակութեան», վերակազմում է արդէն գոյութիւն ունեցող «Անձնուէր ընկերութիւնը», բանում է չափահասների համար կիրառելի օրենքայ դպրոց, կազմակերպում է լրասարան՝ կիրակի օրերը դասախօսելու, ձեռնարկում է ս. Նշան վանքի հողերի բարւոյ մշակութեան և մատակարարութեան գործին:

Ցաշորդ տարին նա հրաւիրւում է Կ. Պոլիս՝ ստանձնելու Գաղարգիւի Արամեան վարժարանի տեսչութիւնը և միևնոյն ժամանակ հիմնում է այդտեղ մի դուռ գիտական ամսագիր «Բիտական Ջարժում» վերնադրով, որ գոյութիւն ունեցաւ մինչև 1887-ի վերջերը և դադարեց խմբագրի հեռանալով Կ. Պոլսից:

Իր ստացած ուսումը դեռ թերի նկատելով երկտասարդ Տաղաւարեան 1888-ի սկզբները մտնում է ուսանող Պարիզի բժշկական համալսարանը և ապա Պատեօրի ինստիտուտը: 1891 թ. հոկտեմբերին նա ստանում է «Licencié es Sciences» (Ազատ ի գիտութիւնս) աստիճանը Սօրբօնից, իսկ 1893-ին պատեօրեան ինստիտուտից վկայում է իբրեւ բակտերիօլոգ (մանրէագէտ): Ընդհանրապէս 1895-ին քննութիւն տալով ստանում է բժշկական համալսարանից բժշկականութեան դոկտորի աստիճան և, վերադառնալով Կ. Պոլիս, սկսում է բժշկական սրահովիկ:

Այժմ նրա առաջ բաց էր լայնապէս ազգային և հասարակական գործունէութեան ասպարէզը: Պատրիարքարանը իսկոյն նշանակում է նրան ազգային ս. Փրկիչ Հիւանդանոցի քննիչ յանձնաժողովի անդամ և տեղեկաբեր, իսկ 1894—6 թ. Պէրայի ազգային վարժարանի հոգաբարձութեան անդամ և ա-

տննապետ:

Հայկական կոտորածների ժամանակ դոկտոր Տաղաւարեան, իբրեւ ազգային գործիչ, ենթարկուեց շատերի կրած բախտին, 1895 և 1896-ին նա երկու անգամ բանտարկուեց և երկրորդ անգամին 5 ամիս մնալով բանտում, նա ազատուեց ընդհանուր ներման շնորհիւ 1897-ին Կ. Պոլսի Ֆերանսիական հիւանդանոցի օժանդակ-բժիշկ կարգուեց, իսկ 1899-ին նշանակուեց Ազգային հիւանդանոցի զբխատուր բժիշկ, որպիսի պաշտօնը վարում է և այժմ:

Դալով բուն գրական գործունէութեան, պէտք է ասել, որ այդ գործունէութիւնը ևս բաւական բեղմնաւոր է եղել: Բացի զանազան զիտական, բանասիրական և սօցիալական յօդուածներէց, տպւած զանազան հանդէսների և լրագիրների մէջ, բացի «Գիտական ձարժում» ամսագրի մէջ տպւած յօդուածներէց, Տաղաւարեան ունի առանձին տպւած բազմաթիւ աշխատութիւններ, որոնցից կը յիշենք 1) Բնական պատմութիւն 4 հատոր (տպւած է միայն I հատորը) Կ. Պոլիս, 1886, 2) Ծագումն հայ ծառից 1895, Վիեննա, 3) Մանրեաբանութիւն 1898, Կ. Պոլիս, 4) Տիեզերքը եւ իր կազմութիւնը (Ֆրանսերէն) 1898 Կ. Պոլիս, 5) Ծագումն եւ կենսագրութիւն Դրիգոր Աղաբաճի 1898 և 1900, Երկու տպագրութիւն, Վենետիկ, 6) Առողջիկն առողջապահութիւն, 1898, Կ. Պոլիս, 7) Ծննդական գործարան, 1898, Կ. Պոլիս, 8) Մարդկային ստղծման պատմութիւն, 1900, Կ. Պոլիս, 9) Բաւազուցակ ախտաբանութիւն 1900 և 1901, Կ. Պոլիս, 10) Դաւորականութիւն գ. տպագրութիւն, Կ. Պոլիս, 1901. 11) Ուրուագիծ պատմութեան հայոց 1903 թ. Պարիզ, 12) Հայոց հիւն կրօնը, 1903 թ. Պարիզ և այլն:

Բացի այս տպւած աշխատութիւններից, Տաղաւարեան պատրաստած ունի նաև մի քանի կարեւոր աշխատութիւն—«Պատմութիւն իմացական զարգացման հայոց հին ժամա-

նակներէ մինչ մեր օրերը», 2) «Հայք ու Հայաստան», որի Ֆրանսիական Թարգմանութիւնն ևս պատրաստած ունի և, երեկ, շուտով լոյս կը տեսնէ: Տպագրւած աշխատութիւններից մի քանիսը Թարգմանւած են Ֆրանսերէն և Թիւրքերէն: Ֆրանսիական կառավարութիւնը, զնահատելով դոկտոր Տաղաւարեանի գործերը, ակադէմիական պատուանշան է տուել նրան (officier d'Académie), իսկ Ֆրանսիական աստղագիտական ընկերութիւնը իր անդամների շարքի մէջ է մտցրել նրան:

Հասարակական և գրական դրածունէութեան այս ցուցակը ցոյց է տալիս, որ յանձին դոկտոր Ն. Տաղաւարեանի Թիւրքահայերը ունեցել են մի եռանդուն և արդիւնաւէտ գործիչ ու գրող, ուստի և միանգամայն արժանի հրատարակական այն յարգանքին, որ այսօր Կ. Պոլսի գրականները պէտք է մատուցանեն նրան:

«Մուրճ» ամսագրի խմբագրութիւնը ձայնակցելով «Մշակ»-ի բարեկցանկութիւններին և շնորհաւորելով իր կողմից ևս յարգելի յորեկեանքին, ցատում է որ յորեկանական մասնաժողովը անկարող է գտնուել իմաց տալ Պոլսից դուրս գտնուող հայ գրական շրջաններին իր հոմակրելի նախաձեռնութեան մասին:

— «Արեւելեան մամուլ», օգոստ.— Բարեկցէն «Բիւզանդիոն»-ի գրուած նամակէ մը զհոգեթեմա կը տեղեկանանք թէ Իզմիրից ծանօթ ընտանիքի մը անդամներէն Պ. Մաքսուտեան Բարեկցի Քօնստնդուպոլիսի մէջ ամենալավող կերպով անցունելով իր քննութիւնները իբր ողբերգակ և միանգամայն իբր կատակերգակ՝ արժանացել է առաջին մրցանակի: Պ. Մաքսուտեան աշակերտած է նշանաւոր Սիլվենի և, ինչպէս կ'ընէ նամակագիրը, գրեթէ ամբողջապէս ընդօրինակած է — տեղ տեղ ալ գերազանց — իր վարպետին արտասանութեան եղանակն և ղեմագծերու շարժումները: Ի մօտոյ

Պ. Մարտոսեան՝ իբր հայ արուեստագէտ՝ առաջին անգամ ըլլալով պիտի երևնայ ֆրանսական ըմմին վրայ՝ Օսեոնի թատրոնին մէջ:

— Ուրիշ աղբիւրներէից էլ իմանում ենք, որ Ամբրիկայում եւ յայտնուել է մի հայ դերասանուհի՝ օր. Փլորա Ջապէլ (Ջապէլ Մանկասարեան), որ բաւական նշանաւոր տղոլութիւն Շուի ամերիկական եւ անգլիական թատերաբեմերի վրայ:

«Բաւաւեր» մայիս-յունիս. — Պր. Փրօֆֆ-Դալֆանեան իր վարդապետին՝ մեծ երաժշտագետ Վէնսան տ'էնտիի՝ պատուակալ նախագահութեան ներքեւ, ու երաժշտարան (conservatoire) էօժէն ալ Սոնիէրի նախագահութեամբ, Պատիւիէրի թատրոնին մէջ անցեալ ամիս բանախօսութիւն մը կատարեց հայ ժողովուրդին ղեղարուստական յատկութիւններուն ու մանաւանդ տնոր երաժշտական դերին վրայ:

Նախագահը իր հայրենակիցներուն (քանի որ սրահը զբաւաւած էր, ղրեթէ ամբողջութեամբ, երազացի երկուսը ղազմութենէ մը, ե ուր հազիւ ճաւնեակ մը հայեր հետաքրքրուած էին ղալու...) ներկայացրեց մեր երիտաւարդ ազգակիցը:

Ահաւասիկ՝ ինչ որ կը ղրէ այս մասին *Revue Musicale* (1 Յուլիս 1904) երաժշտական ամսաթիւրթը.

«... Այս ուսումնասիրութիւնը պարտի, արղարեւ, շահաբրքրել ամէն երաժիշտները. վասն ղի խնդիրը վերականգնանցնելու վրայ է նախնական արուեստ մը՝ որեւ հետեւաբար բացարձակօրէն անկեղծ է. մերինէն շատ տարբեր է ան, ե սակայն լի երազներով եւ ըղձաբով (aspiration), որ խիստ մօտիկ են մեզի: Չաա պարզ, արուեստակութենէ ղերծ փորբիկ նախադասութիւններով, բայց նաեւ համոզումի եռանդով մը ու տպաւորիչ ճշգրտութեամբ մը Պր. Փրօֆֆ-Դալֆանեան կը ցուցնէ այս արուեստին կարեւորութիւնը արեւեան քաղաքակրթութեան մէջ: Հայերը ասիական

հոգին վրայ եղած են ճիշդ այնպէս ինչպէս Յոյները յերոսպա— յաղթական պարտաւածներ՝ որ, արուեստներու ղանձը պահպանելով, յաղթողները կը հարկադրեն իրենց ղարոցին մէջ ուսանելու: Ու եթէ ճարտարագետութիւնն ու միւս կերպնակալ (plastique) արուեստները ղարոզացան ղարզանալ Յաճկի նման ժողովուրդի մը աւերակաւութեան ներքեւ, երաժշտութիւնը եղաւ հոս՝ ինչպէս այլուր՝ հարբատահաւաններուն միոթարանքը, ե իբրեւ անմարմնեղէն տաճարն անոնց՝ օրոնց տունները կը քաղէին... Այնպէս որ հայ ժողովուրդին հին երգերուն— նոյնիսկ ուրախութեան երգերուն— այս ծանրալուր՝ ե ինքնամփոփ հանգամանքը՝ կեանքի խաւիւ խոշտանղուած հոգիները մեղի կը պատմէ: Պր. Փրօֆֆ-Դալֆանեան մեղի ծանօթացուց ատոնցմէ շատ մը հատուածներ, փոխառեալ ղարալանի հին հաւաքածոյէն, ինչպէս նաեւ կրօնական ու ժողովրդական ուրիշ հաւաքածոյներէ: Գրեթէ ամէնքն ալ խիստ ղեղեցիկ են. մասնաւորապէս Ծնունդի սա հին երգը՝ «Անկիւրն էակից», կամ իբրկուան սա երգը՝ «Այոս ղուարթ» ե կամ սա՝ «Ուտի բուրելով խնկոց անուշահոտութիւն» որուն երաժշտական կազմութիւնը շատ կը նմանի մեր Գրիգորեան երգերուն: Պր. Փրօֆֆ-Դալֆանեան նուազեց նաեւ տաճկերէն բառերով քանի մը երգեր, բացատրելու համար թէ «տաճկական» ըսուած երաժշտութիւնը հայ երաժշտութենէն անանցուած է: Ինչ վերջը նուազեց «Օրօր» մը որուն հեղինակը ինքն իսկ է, ե որ կը ցուցնէ այն օղուտ ղոր արղի երաժիշտները կրնան քաղել հայ արուեստին հին աւանդութիւններէն: Ունկնղիւրները՝ հրաղուրուած՝ վերստին խնդրեցին «Օրօր»-ը:

«Русское Богатство»-ի օղոստոսի համարում մի համառօտ, բայց հետաքրքրի յօղուած է տղուած «Էвреи и вои́на» վերնաղբի տակ որի կարեւոր մասերը առաջ ենք բերում քաղուածօրէն:

«նախ «Новое Время» աշխատեց թարմացնել անտիսեմիտիզմը, առում է յիշեալ ռուս ամսագիրը,—մեղադրելով հրէաներին, թէ նրանք մեր հայրենիքի գլխին պատերազմ բերին, թէև այդ բանում նրանք իհարկէ «Новое Время»-ից նուազ մեղաւոր են: Պակաս չեղան վայրենի փորձեր մեղադրելու հրէաներին եապոնացիներին ցոյց տուած օգնութեան մէջ: Այնուհետև ուրիշ թերթեր հրէաների դէպի պատերազմ ունեցած վերաբերմունքի մասին հաղորդեցին մի քանի փաստեր. այդ իսկ փաստերի զուգադրութիւնը անօգուտ չի լինի:

«Ինչպէս յայտնի է, չնայելով հրէաների զինուորական ծառայութիւնից խոյս տալու մասին եղած խօսքու-զրոյցին, այնուամենայնիւ բանակում հրէաների թիւը ոչ թէ քիչ է, այլ աւելի է, քան այդ պէտք է լինէր ըստ նրանց համեմատական թուի Ռուսաստանում: Մանաւանդ շատ հրէաներ զբուկ են Սիբիրեան գնդերում, և այս հանգամանքը էլ աւելի մեծացնում է հրէաների տոկոսը զործող բանակի մէջ:

«Պետերբուրգի բարբրին հաշուով, որ նա հաղորդել է «Варж. Вѣд.» աշխատակցին, այժմ կուտող հրէաների թիւը առնուազն տասն հինգ հազարի է հասնում: Այժմ այդ թիւը կարելի է բարձրացնել: Սրտերի խորքը կարգացող թերթերը աշխատեցին գուշակել, թէ հրէաների նուիրատուութիւնները պատերազմական պէտքերին կ'ուղար-

կուեն ճապոնացիներին: Փաստերը ցոյց տուին ի հարկէ, հակառակը. հրէական բուրժուազիան նուիրում է նոյնքան, որքան և ուրիշները:

Հրէաների վարժունքի մասին պատերազմի դաշտում նոյնպէս ստացուած են այնպիսի տեղեկութիւններ, որպիսին սպասելի էր: Ինչպէս յայտնի է, այնտեղ առանձնապէս շատ են հրէա բժիշկներ. պատերազմ գնացող բժիշկների առաջին խումբը բաղկացած էր համարեա բացառապէս հրէաներից. սա բոլորովին հասկանալի է, քանի որ պետական ծառայութիւնը, որից նրանք զրկուած են, նրանց չէր ապաստում զօրակոչից (մորիլիզացիա):»

Այնուհետև յօդուածագիրը յիշատակում է, թէ հրէա զինուորները որպիսի անձնուրացութեամբ են կուտ իւրանց ռուս ընկերակիցների կողքին ընդհանուր թշնամու դէմ և վերջացնում է հետեւեւ խօսքերով.

«Այժմ աւելի քան երեւիցէ ի դէպ է ոչ միայն խօսքով, այլ և զօրծով ամեն մի քաղաքացու հրաւիրել դէպի ազատ և ձեռներէց զօրծուանութիւն ընդհանուր բարիքի համար: Հպատակից կարելի է պահանջել միմիայն կամակատարութիւն, ձեռներէցութիւն կարող են ցոյց տալ միայն քաղաքացիները: Հէնց այդ ձեռներէցութեան մէջ է կայանում իռիպկան հայրենասիրութիւնը, իսկ վերջինս սնունդ ստանում միայն այն իրաւունքների զիտակցութեամբ, որոնք ապահովեցնում են մեր համակեցութիւնը:»